


14288



1926

535
602

ԻՆՉՊԷՍ ԿԸ ԳՈՂՆԱՆ

ՀԱՅ ԿԱՐՄԻՐ ԽԱԶԻ ԳՈՂՅՈՒԱՆ ԼԱԹԵՐԸ
ԻՐԱՒԱՐԱՐ ԱՏԵԱՆԻ ՄԸ ՎՃՌԱԳՐԻՆ ԱՌԹԻԻ


Գրեց Մ.ԱՂԱԶԱՐԵԱՆ



* B2001

1926
ՊԵՅՐՈՒԹ

343.7
Վ-43



6026

343.7

Ա-43

պ

ԻՆՉՊԷՍ ԿԸ ԳՈՂՆԱՆ

ՀԱՅ ԿԱՐՄԻ ԻԱԶԻ ԳՈՂՑՈՒԱԾ ԼԱԹԵՐԸ
ԻՐԱԽԱՐԱՐ ԱՏԵԱՆԻ ՄԸ ՎՃՌԱԳՐԻՆ ԱՌԹԻԻ


Գրեց Մ.ԱՂԱԶԱՐԵԱՆ



1926
ՊԵՏՐՈՊԻՏ

2010

Գրադարանի Զանգեզուրի
1935թ.



25848-14.2.

83

ԴԱԾՆԱԿՑԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԳՈՂՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ ԻՐԱԽԱՐԱՐ ԱՏԵԱՆԻ ՄԸ ՎՃԻԱԳՐԻՆ ԱՌԹԻՒ

ԳՐԵՑ՝ Մ. ԱՂԱԶՍՐԵԱՆ

Պէյրութի դաշնակցական Կարմիր խաչի գոյութեան ծա-
նօթ խնդիրը արդէն արձագանգ գտած է Սուրիոյ և արտասահ-
մանի հայ մամուլին մէջ: Մենք անցքերու հակիրճ նկարագ-
րականով մը միայն պիտի անցնինք իրաւարար ատեանի տեղե-
կագիր վեպագրին (հրատարակուած "ՆՈՐ ՓԻԻՆԻԿ" թիւ 102ի մէջ)
որը ինքնաբերաբար լայն նիւթ կուտայ մեր այս աշխատութեան:

Ա. Բերիկայի դաշնակցական Կարմիր խաչը Տաճասկոսի վերջին
աղէտեալներուն անունովը հանգանակութիւն կատարած էր Ամե-
րիկայի մէջ, և Պէյրութի համանուն Կարմիր խաչին ղրկած էր 34
ՄԵՄ հակ հին լաթեր, 9 սնտուկ կօշիկ և 500 տօլար դրամ (ըստ
"ՆՈՐ ՓԻԻՆԻԿ"ի):

Պէյրութի Կ. խաչի վարչութիւնը յիշեալ 34 հակ լաթերու
հակասնական և մաքսային գործառնութիւններու հոգը յանձ-
նած էր Պ. Արմենակ Եղիանին (հին լաթի առեւտրական և Կար-
միր խաչի անդամ):

Պ. Ա. Եղիանեան անասանելի համարձակ ձեւերով իւրացու-
ցած է յիշեալ լաթերու շատ խոշոր մէկ մասը և Պէյրութի մէջ,
Սուֆ-Սորսոֆ շուկայի վրայ, Աղսիւլ-ձէլալ անուն խանութպանի
մը միայն ծախած է 15000 ֆրանքի արժողութեամբ ևս մի-Քեքեհ
ճաքէթներ: Կատարուած գոյութեան պարագաները հրապարակ-
ուեցան բեռնակիրներ Պ. Պ. Սամուէլ Պալճեանի, Գառնիկ Պալճեա-
նի, Կարապետ Կողիկեանի, Յարութիւն Պարսամեանի կողմէ:
«Լիբանան» առաջին անգամ արձանագրեց մութի մեջ կատար-
ուած զեղծարարութեան լուրը, և ըստ Հայրենակցականներն ու

5263-56



սրտացաւ ազգայինները շատ դառն ու խիստ լեզուով մը բողոքեցին կատարուած ղեղձումներուն դէմ:

Անել ծուղակի մէջ բռնուած մեղսակիցները նոյնքան անամօթ համարձակութիւնով մը կեղծ դատ կազմակերպեցին իրենց մէջ, և այսպէս՝ Կ. Խաչի վարչութիւնը որպէս Դատախազ, իսկ Պ.Ա. Եղիան ամբաստանելով, փոխադարձ կողմերու ընտրութեամբ և հաւանութեամբ կազմուած իրաւարար ատեանի մը առջեւ եկան —” բողոքիւն ամենայն մեղաց, , ստանալու համար:

Բայց շուկայի մէջ մերկապարանոց բռնուած գողութեան առաջ, բողոքող մերկերու և անօթիներու թուքին ու մուրին առջեւ, պէտք էր խաչել մէկը, համայն մեղաւորներու փրկութեան համար:

Եւ այդ մէկը եղաւ ” ընկ, Ա. Եղիաներ:

Իրաւարար Ատեանը վերջապէս տուաւ իր ” մանրակրկիտ, քննութեանց արդիւնք ” վնասգիրք, որուն մէկ սրտադող և բռնազբօսիկ շարահարութիւնները իրենց բոլոր աւելորդ և լայն ճիգերովը, զօրաւոր կերպով կը մատենն կազմակերպեալ գողութեան մը բոլոր սեւ գաղտնիքները՝ Ամերիկայէն մինչեւ Պէյրութ երկարող:

Ահա՝ թէ ի՛նչպէս:

Առաջին ակնարկով դիտելի է որ Ամերիկայի դաշնակցական կարմիր Խաչը 34 ՄԵԾ հակ հին լաթերուն մէջ ցրիւ դրած է 709 հատ [ըստ ծանօթ տեղեկագրի] խափի ֆեթէն ճաքէթներ, որոնք գընուած են Ամերիկայի հրապարակէն:

Այս խափ ճաքէթներուն Ամերիկայի մէջ դրամով գնուած և դրկուած տէնկերուն մէջ ալ ցրիւ դրուած ըլլալու պարագաները կուտան խորհրդաւոր գողութեան մը առաջին ախտանշանները:

Եւ իրաւամբ ալ՝ ապրանքներուն հետ դրկուած Ֆաթիլը ցաւալիօրէն չ’ուշանար փաստելու մեր այս նրբին կասկածը. քանի որ Ֆաթիլըին մէջ նշանակուած է միայն 34 մեծ հակ հագուստ և 9 սնտուկ կօշիկ: Բայց քանի որ կտր. քանի որ գոյգ, ինչ գոյնի կամ սեւակի, բան մը նշանակուած չէ ծանօթ Ֆաթիլըին մէջ, ինչու՞ շուկայէն դրամով գնուած մեծաքանակ ապրանքի մը համար

դոնէ նշանակուած չըլլար հասը, գոյնը, սեւակը, կեիւրը և նոյն իսկ գինը, նման ամէն կերպ չար պատահականութեանց հանդէպ: Տեսնուած բան է որ 9 սնտուկ կօշիկ միայն դրուի Ֆաթիլըի մը մէջ առանց պարունակութեան քանի՞ գոյգ և ի՞նչ սեւակի ապրանք ըլլալը նշանակուած ըլլալու: Ո՛չ ժամանակի և ո՛չ ալ անպէտք յոգնութեան խնդիր էր այս: Օրերով ու շաբաթներով տունէ տուն մէկ կտոր հին լաթի համար սլաքտող կարմիր Խաչի «անձնաշոն» անդամները չէին կրնար մէկ ժամ մը միայն տրամադրել բոլոր կտորներուն թիւը համրելու, տեսակները որոշելու և

Ֆաթիլըին մէջ քիչ մը աւելի մանրամասն բաներ նշանակելու համար. որպէսզի իրենց ” ազգասիրական ” հանգանակութեանց արդիւնքը նման չարաշահութեանց զո՛հ չըլլար, և մերկերն ու անօթիները որոնց անունովը այնքան ազգասիրութիւն, հայրենասիրութիւն ծախած էին Ամերիկայի խեղճ ու միամիտ բանւորներուն, հոս բան մը աւելի ունենային իրենց բազմակիցները: Այլապէս օրերով կտոր մը հին լաթի ետեւէն հեւ իհեւ ազգասիրութիւն ծախող ընկերներ» ը, ինչո՞վ կրնային արգարացնել իրենց այսքան եպերելի անհոգութիւնն ու ծուլութիւնը՝ հանգանակութեան վէրջ հանգանակուած արդիւնքի մասին: Տեղին չէ՞ ըսել կեղտոտ ձեռքերու պիղծ հանգանակութիւն... որուն մէջ տիրող հոգին լոկ անհատական ու բարթիական խարդախ րէզլամն է միշտ:

Բայց սա մեր մոռցուած Ֆաթիլըին մէջ ՚ՄԵԾ ՀԱԿ, , ասացուցաբը շատ բան կը մատնէ: Ժիշտ այդ ՄԵԾին մէջ է թագնուած Ամերիկայէն Պէյրութ երկարող գողութեանց սեւ կծիկին կեղտոտ ծայրը: Որքան էր մեծ, չէ՞ որ այդ 34 ՄԵԾ հակերը հոս, նախքան գողութիւնը, Քարանթինայի մէջ 21 փոքրերու կրցած են վերածել շատ հեշտ կերպով: Եւ սակայն չ’ինչու՞ չի նշանակել հակերուն և սնտուկներուն զաւ, զաւ և որո՞ւ կշիռները դրկուած Ֆաթիլըին մէջ. որպէսզի անով դոնէ կարելի ըլլար բան մը հասկնալ սա սեւ գողութեան մասին: Լսեցէք որ մեր իրաւարար Ատեանը իր ” մանրակրկիտ, քննութեան մի-

Ջոցներովը իսկ չէ կրցած զրկուած ՄԵԾ հակերու և անտուկներու գոնէ կշիռէն բան մը հանել, գողութեան լրական արժէքը գտնելու համար: Եւ այդ բոլորը մերկին ու քաղցածին, որքին ու անկարին հաշուոյն է չէ՞, որոնց անունովը շատեր ազգասէրներ կոչուեցան:

Հոս մեղքը համարժէք է, գողութիւնն ըլլայ թէ անհոգութիւն: Մին որկրամու որկորին կերթայ, միւսը սնանկ հոգիին կը հասնի: Հայ աղէտեալի անունով անվերջ հանգանակութիւն. . . դատարկ ստամոքսներ լեցնելու կամ փայլուն շքանշաններ շահելու համազօր շահադիտութիւններով: Ահա թէ ինչու՞ է կեղտոտ ձեռքերու պիղծ հանգանակութիւն:

Ահա թէ ինչու՞ հեռու պէտք է պահել հայ աղէտեալն ու զաղթականը, հայ որքն ու անկարը այդ թունաւոր հացէն ու շապիկէն:

Բայց հետեւինք գողութեան քակուած կծիկին և տեսնենք թէ ու՞ր կը հասնի անոր վերջին հանգոյցը:

* * * Եւ վերջապէս նոր երկրի հարուստ ծովեզերքէն մեծ ուղիանոսի կատաղի ալիքներուն յանձնուած մեր հին լաթերու "ՄԵԾ", հակերն ալ կը հասնին Պէյրութի քարանձինն: "Ընկ., Արմեն Եղիանեան կարօտով կը դիմարէ ցանկալի հակերը, և այդ առթիւ՝ ահա թէ ինչեր կըսէ իրաւարար ատենը իր ծանօթ տեղեկագրին մէջ:

ՆԿԱՏԵԼՈՎ ՈՐ. Ա. - «Առանց որեւէ պատճառի, եւ առանց որեւէ հրահանգի, եւ մանաւանդ որ վայել էր 34 հակերը նոյնութեամբ 34 պանել, Պ. Ա. Եղիանեան վերոյիշեալ տեսակներու հակառակ 34 հակեր 21 ի վերածել տուած է:

Այսպէս ուրեմն կը հաստատուի որ Պ. Եղիանեան իր նախնական բայերուն մէջ իսկ՝ այս հակերու տուրջ օխորտիւն եւ խառնակ վիճակ սեղծելու կանխամատուրիւն ունեցած է:»

Խեղճ հակեր, որպէս թէ խառնակ ու չիօթ վիճակ ունեցած չըլլային. . . : Բայց ուսկի՞ց նախնական բայերուն մէջ կանխամատուր ունենալը: Արդեօք ելող հակերուն հալ ու խաթիրը նախապէս գիտէ՞ր ինք: Այս կանխամատուրը երբէ՞ն իվեր ունէր, ուսկի՞ց առաւ և ինչու՞ չի ստակաց:

Եւ վերջապէս ունեցածը կանխամատուր էր կըսուի չէ՞: Այլապէս ինչու՞ պէտք էր բացատրել այն անմիտ ու լիրբ յանդգնութիւնը որ ան ունեցած է 34 հակերը 21 ի վերածելու գործի մէջ, առանց երկմտութեան, առանց վախի ու ամօթի, անշուշտ մտաբերած իսկ ըլլալով իր ընթացքին խարդախ ու եպերելի ըլլալը և նոյն իսկ իր դէմ տեսած ըլլալու է բարոյական մահի սեւ ուրուակմանը: Ո՞վ տուաւ Եղիանեանին այդքան լիրբ յանդգնութեան լայն ստապարէղ, այնքա՞ն անհաշիւ կանխամատուր մը իրագործելու համար:

«Բ. Որ յիշեալ հագուստներու հակաճիւղման գործողութիւնը լրացուի վերջ Պ. Ա. Եղիանեան դարձեալ առանց որեւէ պատճառի, ամբողջութեամբ խառն հագուստներու հաւաքածոյ եղող սոյն 34 հակերուն մէջէն զատել տուած է յիշեալ հակերուն մէջը եղող զինուորական խաբէքէթներ եւ ասոնք վերածել տուած է [համեմատել վերջ] երկու առանձին առ ու ծախի ընդունակ հակերու: Հետեալքս կը հաստատուի որ Պ. Ա. Եղիանեան այս նախնական հանգանակութեամբ մէկ դիտուելու հոգածութիւն ունեցած է:»

Վա՛յ այդ խաբէքէթներէն նախնական. բոլոր հանելուկը անոնց գլխուն չէ՞ միթէ: Հոս ալ դարձեալ կանխակալ դիտում, խաբի նախնական գլխուն կըսուի: Բայց կանխամատուրն ու կանխակալ դիտումները այնքա՞ն յստակ և հեռատես աչքերով տեսնող իրաւարար ատենը ինչու՞ անգամ մը չի ըսեր թէ ու՛ր է թաղուած Եղիանեանին այսքան լիրբ յանդգնութեան գաղտնիքը. բան մը չիխորհեցա՞ւ իր «Նախնական» քննութեանց ընթացքին այս քողը անգամ մը վեր առնելու՝ ուր եւ անուրիս քաղուած պիտի գտնուէր անոր գլուխը:

Գ - Որ հակառակ Հ. Կ. խաչի վարչութեան տուած հրահանգներուն թէ ապրանքները փառանքիման պիտի փոխադրուին ձէմէզիյէ, Տօֆ, Չաուեանի տնայնորդ տնակէն եւ Պ. Ա. Եղիանեան նախապէս այս հրահանգը ուղղակի եւ անձնապէս ստացած ըլլալով հանդերձ, զանց լրացած է զանոնք փոխադրել Տօֆ. Չաուեանի տնակէն եւ փոխադրել տուած է իր վանառասունը: Եւ կը հաստատուի նաեւ որ զանոնք իր վանառասունը պահելուն եկրորդ օրը Կ. խաչի վարչութիւնը լսած ըլլալով այս անակնկալը, Պ. Ա. Եղիանեանին ուղղած է ազդարարութիւն մը - գրաւոր - որպէսզի անմիջապէս ապրանքները փոխադրէ նախապէս որոշուած տեղը Բայց Պ. Եղիանեան դարձեալ չէ ուզած ապրանքները անմիջապէս վերադարձնել եւ

րուս Կ. խաչի վարչութեան անդամներուն վկայութեան, նոյն իսկ փափաք յայտնած է զանոնք իր վանառասանը պահել եւ ի հաւելիմ հոս ու հոն բաշխել: Հետեւաբար կը հաստատուի որ Պ. Ա. Եղիաեան այսպէսով լայն դիրքաւ իրենց հետեւում է իր գեղծումները լաւ իրագործելու: Ըստ Պ. Եղիաեանի խոստովանութեան սոյն ապրանքները իր վանառասան մէջ պահած է երեք զիւր: Դա՛ւ ձեռք չունի անասանելի յանդգնութիւնն ու լպիրշ չփափածութիւնը Եղիաեանի մօտ, բան մը որ առանց վարանումի թոյլ կուտայ մեզ ըսելու թէ Եղիան բարոյապէս տէրն է Կ. խաչի վարչութեան սնանկ հոգիին: Եւ անշուշտ կան զօրաւոր պատճառներ Կարմիր խաչի վարչութեան անդամներուն այնքան ստորուկ եւ թակալութեան ոմն գեղծարար հասարակ հնակարկատ Եղիաեանի մը առջեւ: Այլապէս ինչո՞վ բացատրել, որ Կարմիր խաչի վարչութեան հրամանին հակառակ Եղիան զանց կընէ ապրանքները Տօք Չառչեանի տանը կից որոշեալ սենեակը տանիլ, և առանց հիւլէի մը երկմտութեան ու վախի. ուղղակի կը փոխադրէ իր սեփական խանութը, իր պապենական ապրանքին պէս: Իսկ Կ. խաչի «մարտական» «ընկերները» լուս կը մնան մինչեւ որ բեռնակիրներուն արգարդայրոյթը կը տարածուի ամէն կողմ, մինչեւ որ «Լիբանան» կ'արձանագրէ մութին մէջ կատարուող գողութեան լուրը, և մինչեւ որ Պ. Ա. Եղիաեան իր գողոնները կը ծախէ հոս ու հոն: Եւ այս բոլորէն վերջ թուրի ու մուրի ենթարկուած Կ. խաչի վարչութիւնը Նամակ կը գրէ «Ընկ.» Ա. Եղիաեանին և կը խնդրէ որ, ան բարեհաճի գողցուած հակերը տանիլ և յանձնել Տօք Չառչեանի բնակարանը: Բայց Պ. Ա. Եղիաեան դեռ մինչեւ հոս, իր չփացածութենէն բան մը չէ կորսնցուցած: Ան՝ զօրացուած գողի կատարեալ լրբութեամբ — Դարձեալ չի ուզած ապրանքները անմիջապէս վերադարձնել եւ ըստ Կարմիր խաչի վարչութեան անդամներուն վկայութեան, նոյն իսկ փափաք յայտնած է զանոնք իր վանառասանը մեջ պահել եւ հոս ու հոն բաշխել: (Տեղեկագիր Յօդուած Գ.)

Ո՞վ երկինք, երբ և իցէ տեսնուած է մահացու գողի մը մէջ այսքան համարձակութիւն, այսքան չփացածութիւն, այսքան լրբութիւն և մահաւանդ այսքան Տիրականութիւն իր դատախազներուն հանդէպ՝ երբ մահաւանդ որ անոնք ալ իրմէ աւելի Զօրպաներ ըլլան:

Իսկ Դո՛ւք, Տիա՛րք իրաւարար ատեանի արդարակորով անդամներ, գիտե՞ք մէկը որ իր հալալ ապրանքները բռնէ գողի մը ձեռքերուն մէջ, որ իր պատիւը տեսնէ սրիկայի մը նմանեղ ճիրաններուն տակ ու վայրկեանբար չի խոյանայ անոր վերայ, չի հարուածէ ու չի խարանէ զայն իր բազկի կայծակնահար ոյժովը, եթէ... եթէ կ'ըսեմ. առնականութիւնը ոեւե ձեռով կուրծ չի այդ մարդուն մէջ, եթէ մահաւանդ անցեալ կամ ներկայ մեղսակցութեան մը բոլոր սեւ գաղտնիքները աւելի չեն ճշնչեր անոր յանցապարտ մտքին ու սրտին վրայ:

Ապա ուրեմն, ինչո՞վ բացատրեցիք սա «Նամակ գրել»ը. և ըստ յետայն ալ՝ դարձեալ հակերուն երեք օրեր Եղիաեանին խանութը թողուած ըլլալը: Ինչո՞վ սրբեցիք սեւ մեղքը Կ. խաչի վարչութեան յանցապարտ ճակատէն, եթէ գողութիւն ըրած ըլլա՞ր այն, թէ ծուլութիւն կամ զանցառութիւն. կարօտեալի գողցուած չապկի ի պաշտպանութիւն ըլլար այն, թէ Ամէրիկայէն մինչեւ Պէյրութ աճուրդի հանուած մեր Ս. պատուոյն փրկութեան. ինչո՞ւ չի գամեցիք մեղքի սուր գամը անոնց ճիշդ ճակատին:

Բայց լսեցէ՛ք դեռ ինչեր կընէ տեղակապիրը:

Դ-Հոս հարկ է յիշել որ, Պ. Ա. Եղիաեան քէ գրաւորապէս եւ քէ բերանացի կերպով յայտարարեց որ այս ապրանքներուն գործառնութեանց միջոցին իմք առն-

ներուն հանդէպ՝ երբ մահաւանդ որ անոնք ալ իրմէ աւելի Զօրպաներ ըլլան:

Իսկ Դո՛ւք, Տիա՛րք իրաւարար ատեանի արդարակորով անդամներ, գիտե՞ք մէկը որ իր հալալ ապրանքները բռնէ գողի մը ձեռքերուն մէջ, որ իր պատիւը տեսնէ սրիկայի մը նմանեղ ճիրաններուն տակ ու վայրկեանբար չի խոյանայ անոր վերայ, չի հարուածէ ու չի խարանէ զայն իր բազկի կայծակնահար ոյժովը, եթէ... եթէ կ'ըսեմ. առնականութիւնը ոեւե ձեռով կուրծ չի այդ մարդուն մէջ, եթէ մահաւանդ անցեալ կամ ներկայ մեղսակցութեան մը բոլոր սեւ գաղտնիքները աւելի չեն ճշնչեր անոր յանցապարտ մտքին ու սրտին վրայ:

Ապա ուրեմն, ինչո՞վ բացատրեցիք սա «Նամակ գրել»ը. և ըստ յետայն ալ՝ դարձեալ հակերուն երեք օրեր Եղիաեանին խանութը թողուած ըլլալը: Ինչո՞վ սրբեցիք սեւ մեղքը Կ. խաչի վարչութեան յանցապարտ ճակատէն, եթէ գողութիւն ըրած ըլլա՞ր այն, թէ ծուլութիւն կամ զանցառութիւն. կարօտեալի գողցուած չապկի ի պաշտպանութիւն ըլլար այն, թէ Ամէրիկայէն մինչեւ Պէյրութ աճուրդի հանուած մեր Ս. պատուոյն փրկութեան. ինչո՞ւ չի գամեցիք մեղքի սուր գամը անոնց ճիշդ ճակատին:

Բայց լսեցէ՛ք դեռ ինչեր կընէ տեղակապիրը:

Դ-Հոս հարկ է յիշել որ, Պ. Ա. Եղիաեան քէ գրաւորապէս եւ քէ բերանացի կերպով յայտարարեց որ այս ապրանքներուն գործառնութեանց միջոցին իմք առն-

ներուն հանդէպ՝ երբ մահաւանդ որ անոնք ալ իրմէ աւելի Զօրպաներ ըլլան:

Իսկ Դո՛ւք, Տիա՛րք իրաւարար ատեանի արդարակորով անդամներ, գիտե՞ք մէկը որ իր հալալ ապրանքները բռնէ գողի մը ձեռքերուն մէջ, որ իր պատիւը տեսնէ սրիկայի մը նմանեղ ճիրաններուն տակ ու վայրկեանբար չի խոյանայ անոր վերայ, չի հարուածէ ու չի խարանէ զայն իր բազկի կայծակնահար ոյժովը, եթէ... եթէ կ'ըսեմ. առնականութիւնը ոեւե ձեռով կուրծ չի այդ մարդուն մէջ, եթէ մահաւանդ անցեալ կամ ներկայ մեղսակցութեան մը բոլոր սեւ գաղտնիքները աւելի չեն ճշնչեր անոր յանցապարտ մտքին ու սրտին վրայ:

նապէս պատասխանատու է, նետեալքար եղած խոստովանութիւններն ու վկայութիւններ կուգան վաւերացնելու որ, երկար ասեմէ իվեր Պ. Ա. Եղիաեանին վաստակներ վաշտելու եւ այս ապրանքներու գործառնութեանց միջոցին իր գործակիցը եւ աշխատակիցը եղող Պ. Նազարէթ Ծանապազեանի կողմէ Դարանթիւնաի մէջ զատուած եւ զատել տուած է 34 հաւերու մէջէն 70-80 կտոր լաւագոյն հազուսներ:

Հոս դարձեալ կը շնչոտուի Պ. Եղիաեանի տիրական վերաբերումը Ամերիկայէն հասնող անհաշիւ լաթերու հանդէպ. որովհետեւ ան նշանակութիւնն և արժէքը չի տար որ 70—80 հատ լաւագոյն լաթեր կը տարուի, կը պակսի ընդհանուր թիւէն, ինք հաշիւ պիտի տայ անոնց համար, պատասխանատու և զող պիտի նկատուի ազդին առջեւ, մահացող արժանապատուութեան սեւ ուրուականը կը տնկուի իր առաջ: Այս բոլորը ընականաբար կը մտաբերէ, կը տեսնէ. բայց դարձեալ հոգ չէ՝ . . . զօրաւոր է կռնակս, և յաջող են պարագաները. սա Փաթիւրը առանց հասի, տեսակի, կշիռի միայն ՄԵԾ հակ կըսէ. ես զանոնք աւելի մեծերու կը վերածեմ . . . : Իսկ սա մեր ընկ. վարչականները, օ՛, անոնք բոլորը գրպանիս մէջ են. չէ՞ որ անոնք բան մը չունին և չեն կրնար խօսիլ ինծի: Հաշիւ . . . բայց ի՞նչ հաշիւ, չէ՞ որ ազդին հաշուեպահանջ դաշնակցական ընկերներն ալ հոն են: Հոգ չէ՞ . . . թող տանին . . . Ծանապազեալ մերն է. մըտովին կը մենախօսէ Պ. Եղիաեան Գարանքիմայի մէջ: Եւ անա՛ թէ ինչպէս կեղտոտ ձեռքերով հանդանակուած կեղտոտ քուրջներն ալ կը տարուին, կը ծախուին, կը թալլուին . . . :

Բայց ի՞նչ հոգ, չէ՞ որ հանգանակութիւն րրին, տունէ տուն խանութէ խանութ, հեւ ի հեւ ման եկան. բոլորը իրենց համար ըսաւ— Ահա ազգին բարեւերները, ազգասերները—:

Զէ՞ որ հոս կը վերջանայ փարիսեցիական հանգանակութեան մահապարտ միտքն ալ: Ահա թէ ինչպէս մենք ալ հոս, այս գողութեան տեղեկագրի բոլոր շարահարական ընթացքին, Ամերիկայէն մինչև Պէյրութ՝ "ծուլացում—զանցում", ներու եթէ կուզէք ըսել, տակէն զօրաւոր կերպով կը ձեռքաւորուինք այդ անիծապարտ միտքը "Կ. խաչ, պիտակին տակ պահուած. և առա-

ւելապէս այդ բանին համար կուզենք և կոչ կընենք բոլոր հայ աշխատաւորութեան՝ աղէտեալ ըլլայ թէ կարօտեալ, դէն չպրտել այդ թունաւոր շապիկները, և իրենց բիրտ բազկի ոյժովը փշոկ նման ամէն կարգի կեղծ ազգասիրութեան, բարեսիրութեան պիղծ կուգորը:

— Ե. — Եղած վկայութիւններէն է Պ. Արմէն Եղիաեանի խոստովանութիւններէն կը հաստատուի որ 350+50=400 զինուորական Խաբի-քէթէն նախքան Պ. Ա. Եղիաեան ծախած է Սուխ-Սուխ Ապսիլ ձէլալ անուն խանութպանի մը, ուս իր յայտարարեան եօթը մէկ ութերորդ ջէնքի. այսինքն հասր եօթը դր. հինգ փարալ ոսկեղրամէն:

Այս մասին ոչ մէկ տարակարծութիւն մեր մէջ. բացի Պ. Ա. Եղիաեանէն՝ որը մերժելով կը մերժէ ամէն զեղծում և կը յայտարարէ թէ Ապսիլ ձէլալին ծախուած խաբի ճաքէթները իր սեփական ապրանքներն են: Բայց տեղեկագիրը կըսէ այդ մասին:

Զ. — Երաւարտ ասեանս նախանձախնդիր խնդրոյն մանրամասնութեան եւ իրաւասւ ըլլալով բազմակողմանի բնութեան. (. .) իրաւարտ ասեանս ընթացք տուաւ Պ. Ա. Եղիաեանին այս խնկնապատեպանութիւնը եւ իմէ պահանջեց, որ այս խնդրոյ աւարկայ եղող ապրանք իրեն ըլլալը հաստատու նամակ, մքերտեստ տուաւ, փաստաթուղթեր եւ Քաբէթիւրը ինչպէս նաեւ այս ապրանքին համար իրեն կողմէ եղած մաքսային ծախուց հաշիւը ներկայացնէ ասեանիս. եւ որ Պ. Ա. Եղիաեան մերժելով մեր այս անհրաժեշտ եւ օրինական պահանջները հրաժարելով տուաւ ցոյց տալէ ասեանիս, ներկայացուց միմիայն Քաբէթիւր մը եւ անոր չանամապաստիան նամակներ զորս իրաւարտ ասեանս յետ մանրակրկիտ բնութեան, տեսու որ ՔԱԲԵԹԻՒՐԸ ԿԵՂԾՈՒՄԸ է:

Հոս կ'երեւի թէ՛ Պ. Ա. Եղիաեան ալ ուշաբերուած է. բայց ոչ յուսալքուած: Որպէս վերջին միջոց, այդքան կոպտօրէն Ֆաթիւր մը կ'եղծելը Եղիաեանի տկարամտութեանը կարելի չէ վերագրել. թող որ ինքը չափազանց ուշիմ, ծանօթ և փորձառու մէկն է նման խնդիրներու մասին: Ֆաթիւրին վրայ գործուած զեղծումը (ինչ որ մենք տեսանք) մանուկ մը կամ կատարեալ խենթ մը անգամ չի պիտի ուզէր այդքան կոպիտ ձեւի տակ ներկայացնել իրաւարար ասեանի մը. եթէ բնաւորոյ, քա-

ջախերոց կամ ներքնապէս պաշտպանելու խոստումներ ընող մէկը չըլլար իր ետին: Եւ ինքն ալ այս բանը իրեն թելադրողներուն ամենակարողութեան մասին մեծ հաւատք չ'ունենար իր մէջը:

Արդ՝ ինքնիրեն բազմակողմանի քննութեան իրաւունք տուող իրաւարար ատեանը. արդեօք խորացա՞ւ այս հոգեբանական կէտին վրայ, քննե՞ց, վերլուծե՞ց և բացատրե՞ց ամբողջ անցքերու ընթացքին ամբաստանեալի անձին վրայ տիրող արտակարգ համաճակութիւնը, Եփացածութիւնը, անխոհմութիւնը, անմտութիւնը և սա վերջին իմաստութիւնը: Ասոնք հոգեբանական վիճակներն են, որոնք անպայման արտաքին ազդակներէ կը յառաջանան մարդ էակին մէջ, և կը հրահրուին ու չափազանցութիւններու կը հասնին արտաքին շատ փոքր թելադրութիւններով: Աշխարհային օրէնքի դատաւորները, որքան ալ չոր օրինադիրքը ունենան իրենց ձեռքին մէջ, և դարձեալ առաջին և աւագ պարտականութիւնսն է դիտել, վերլուծել և բացատրել յանձնարարտներու հոգեկան վիճակի ելեւէջները ամբողջ դատավարութեան եւ անձքերու ընթացքին: Եւ այդպիսով միայն մեծ դատաւորները շատ յաճախ կրցած են թափանցել դատական նրբին գաղափրներու խորերը և շատ արդարութիւնները ձեռքադատել ճարպիկ փաստաբանութիւններու մանուշակապատ լարերէն: Վերջապէս ինչ որ սա գրուած տեղակագրի բոլոր մասերէն կարելի է դուրս հանել այս խնդրոյն մէջ, ԵՂԻԱՍԵԱՆ ԳՈՂ ՄԸ ԶԵ, ԶՈՂ ՄԸՆ Է:

Անշուշտ ըսել չենք ուզէր թէ Եղիանան չէ գողցած: Ո՛չ ան գողցած է որքին ու անկարին շապիկը անամօթաբար, անկեղծօրէն:

Բայց ինչ որ կը մատնանշուի իր մասին տրուած գողութեան տեղակագրին մէջ, իր ոչ մէկ արարքը առջեւէն մինչեւ վերջը կը համապատասխանէ գողի մը ճարպիկ ձեւերուն: Ան իրեն յանձնուած ապրանքին հետ վարուած է, ոչ թէ նրբամիտ և վարժ գողի մը պէս, այլ չափազանց Եփացած, քաջախելուած և նպաստաւորուած գողի մը կատարեալ անհոգութիւններով:

Ասով դարձեալ չենք ուզէր ըսել թէ Եղիանան ճարպիկ և վարժ գող մը չէ. ո՛չ, ան անպատճառ հրաշալի գող մը ըլլալու է, որուն վստահուած է այսքան վրան բաց և մեծ գողութիւն մը: Միայն թէ ինչ որ կարելի է եզրակացնել Պ. Եղիանանի մեղսակիցները երեւի իրենք ալ շատ ճարպիկ դառցուածքներով պահ մը նոյն իսկ Եղիանանին հասկըցնել ուզած չեն թէ զինքը կը մղեն արարքի մը, որ գողութիւն կը նշանակէ, որուն յառաջիկայ բոլոր հետեւանքները միմիայն իրեն վրայ կը ճնշեն. և ասոնց այդպիսի ընկրկեցուցիչ վախ ու սարսափ ազդելու, անոնք միշտ և շատ զօրաւոր կերպերով գաղափարած են զայն թէ այս ապրանքները կը պատկանին Կ. խաչին, որոնց առնուելուն ծախսուելուն, թափուելուն թէ քալուելուն ոչ ոք կրնայ և իրաւասու է միջամուխ ըլլալու, բայց եթէ միայն իրենք՝ Կ. խաչի գործօն անդամները. և թէ Կ. խաչը ըլլալով դառնակցական կազմակերպութիւն մը, ազգային ոչ մէկ վերին մարմնի հաշուետու եղած է ցարդ եւ Կ: Ահա՛ թէ իրենց մէջ մշտապէս տիրական եղող որպիսի՝ անիծապարտ միտքերով է որ կրցած են զօրացնել Եղիանանի յանգրցութիւնը և լպիրշ չփացածութիւնը: Ու Եղիանան, ինքն ալ ըլլալով Կ. խաչի գործօն մէկ անդամը, նամահաւանդ և հաւատացած ըլլալով որ զաշնակցական կազմակերպութիւնները ազդին անհաշուետու և զօրպա եղած են միշտ, ո՛չ մէկ նշանակութիւն տուած է որ՝ 34 Մեծ հակերը 21ի՝ կը վերածէ: Որ՝ խա՛ի Բեքեմ Եփեքները կը զատէ և առանձին «առնու ծախի յարմար» հակեր կը պատրաստէ, որ՝ հակառակ իրեն տրուած հրամանին, հակերը իր սեփական խանութը կը տանի. որ՝ թոյլ կուտայ Պ. Շահպաղեանին որ այն ալ 70-80 կտոր լաւագոյններէն տանի իր տունը, որ՝ օր ցերեկով, բաց հրապարակի վրայ 400 հատ ճաքէթներ (ծանօթ և փաստուածը միայն ըստ տեղակագրի) ծախէ Ապտիւլ Ճէլալ անուն խանութպանի մը, և ի լրումն ամէն չփացածութեան, Ֆաթիւր մը կոպտօրեն կեղծելու տխմարութիւնը կունենայ: Զէ՞ որ իրենց, Կ. խաչի դառնակցութեան բաժարցակ մալն է այս, ազա՜ս անկախ ոեւե

հալկուի: Ահա թէ ուր է մեր ազգային բարքերու ախտաւորման թունաւոր շունչը որը զօրաւոր հակաճակարկներով պէտք է մաքրուի սա աղէտեալ հայութեան սգաւոր գլխի վրայէն:

Պէյրուսի դաշնակցական կարմիր խաչը որ մօտ հինգ տարիներէ ի վեր կը սեն թէ գոյութիւն ունի, ուր և ի՞նչ հաշիւ տուած է ազգին, երբ տօնական օրերու իւղազինն անգամ աճապարար ձեւերով կորցած է չեզոք, բարեպաշտ հասարակութեան քսակներէն, եկեղեցիներու բակերուն մէջ զօրպ ոյուրեալմբ սեղաւորած Կ. խաչի սեղաններուն շուրջ:

Հին վարչութիւնը մտ երկու տարի առաջ սեւ հող քաշեց իր քանի մը տարիներու նեխած հաշիւներուն վրայ, և «Փիւնիկ» Ալիւլիա կարգաց, անոր գլխուն գարշ հոտը դուրս չի տալու համար: Իսկ յաջորդող նոր վարչութիւնը նոր փարիսեցիութիւններով քանի մը անգամներ հաշուական փոքր ցանկեր մը ցուցադրեց «Փիւնիկ»ի մէջ լոկ դուրս տուող քարշահոտութիւնները մասամբ հակաճակարկելու և նորանոր չեզոք միամիտներ որսալու աճապարար մեղքով: Իսկ ապա՝ երբ աղէտեալներու անւան ղրկուած Տոլարներն ու հին լաթերը ծայր տուին, սրուած քիմքերը խելագար գինովութեամբ մը անձնատուր եղան արբունքի և Դաշնակցական անպատասխանատու ոգին դարձեալ միապետեց իր նոր զոհերուն վրայ: Ու այսօր, այս բոլորէն վերջ պարզ հարցում մը միայն Պէյրուսի Կ. խաչի չէզոք անգամներուն (եթէ ցարդ հոն կը մնան.) Ինչե՞ր տեսն Կ. խաչին ներս: Ի՞նչ կը դաւանի՞ն Կ. խաչի չեզոքութիւնը:

Մենք դատաւճիռ չ'ունինք Պէյրուսի Կ. խաչի մասին: Ան իր իսկ սեփական ձեռքերովը ստորագրած է իր մահապարտի վճիռը, արձանագրած ըլլալով որ Պէյրուսի 25000 հայութեան գրկին մէջ, ամբողջ հինգ տարիներու տենդոտ աշխատութիւններով և լայն ըզգումներով այսօր հաղիւ թէ միայն 20—30 «ընկերներ» ունի իր անդամատեարին մէջ: Իսկ ինչ որ կը վերաբերի իր գործունէութեան, մենք այս էջերուն մէջ արձանագրեցինք վերջին գործութեան մը շատ թարմ մէկ օրինակը,

տաճանց անցեալի թաղուած դիակներուն գարշ հոտը դուրս տալու: Հոս այս փոքր շեղումը իր տեղին, սրտի դառն կ'ակիծով մը արձանագրելէ վերջ, դարձեալ ձեռք կ'առնենք սա ծանօթ գործութեան սեւ կծիկը:

Պ. Ա. Եղիաեանի մեղսակիցները մինչև Ֆաքիրիէն զեղծութիւնը իրեն ձեռք տալէ զատ, թելադրած են նաև զինքը երթալ և հնչակեանները տեսնել, լռեցնելու համար անոնց աղմկաբարութիւնը: Երբ այսպէս Պ. Եղիաեան հնչակեաններու մօտ իր սրտառու թախանձանքները և նոյն իսկ զոհողութիւնները կը ներկայացնէր, միւս կողմէն մեղսակիցները խնդիրը ներքնապէս լուծեան մատնելու տենդագին գործունէութեան մէջ էին: Բայց ճիշտ այդ օրերուն եւ հակառակ Պ. Եղիաեանի թախանձանքներուն հրապարակ հանուած սրտցաւ ազգայիններու բողոքի մէկ թուղիկը խիստ ու դառն լեզուով ուղղուած ընդէմ Կ. խաչի, վիժեցուց ամէն վերջին միջոց, մերկութեան և խայտառակութեան մատնելով մութի մէջ գործուող այս կեղտոտ լուացարարութիւնը:

Հոս Պ. Եղիաեանի գործակիցները անմիջապէս փակեցին հին վարագոյրը, և ամենա արագ ու ճարպիկ շարժումով մը ոտք դրին ուրիշ մէկ կախարդական թելի վրայ: Ժամանակը ուսացած քի պէտք էր քաշել Եղիաեանի կախաղանի չուանը, և ա՛յդ իր նի պէտք էր որ ըլլային:

Իրաւարար ատեանը առանձ իրեն յանձնուած օգիւմանները դատաւորած ըլլալու, առանձ կողմերուն ներկայացուցած պաշտպանողականները անկախ խողովակներէ ստուգութեանը առանձ ուղարկու գաղտնիքներու մութ քողին տակ պահուած իրիւնջները դիտելու, վերլուծելու եւ բացատրելու, առանց կատարուած գործութեան իրական և ամբողջական բանակն ու արպով կ'ստորագրէ Պ. Եղիաեանի մահապարտի դատաւճիռը, մասնաւոր ճիգ և դիտում դնելով անոր խստացուցիչ պարագաներու աւելորդ մանրամասնութիւններուն մէջ՝ ինչ որ տեղեկագրի լեզուին ու եռնչին մէջ ալ նոյն բանի զօրաւոր կերպով ի յայտ

կուգայ, և կը մատնէ իրաւարար ատեանին ալ կանխակալ և կանխամատնեալ դիտումը, Պ. Ա. Եղիաեանը իՍՏԻ ամբաստանելու և ամէն ուշադրութիւն դորաւոր կերպով վրան լարելու, գրգռելու, որով և կարմիր խաչի մեղսակցութիւնը քողարկելով հանրային ուշադրութենէն վրիպեցնելու մութ թելադրա՝քննորոնեթակայ դիտումը: Այդ բանը բարձրադաղակ խօսող նոյն սյդ տեղեկագիրը անշուշտ չի պիտի կրնայինք կրկին անգամ հոս ամբողջութեամբ մէջբերում ընելու. միայն կը խնդրենք և կը և կը թելադրենք հետաքրքիրներուն և թերահաւատներուն որ անգամ մըն ալ կարդան "Նոր Փինիկ", թիւ 102ի մէջ, հըրաւարակութեամբ այդ վճռագրին հարադատ պատճէնը:

Բայց ինչու՞ այդքան անհանգիստ հապճէպ Պ. Ա. Եղիաեանի դատավճիռը ստորագրելու գործին մէջ: Չէ՞ որ իրաւարար ատեանի գործը պիտի ըլլար Ա. = ձեռք Եղիաեանի յանձնարարութիւնը: Բ — Որոշել զողութեան իրական եւ ավերակական քանակն ու արժէք:

Առաջին մասը՝ որ իր մէջ ո՛չ մէկ դադարներ ունէր, և ո՛չ ալ փաստերը կը պակսէին, մենք կը գտնենք ԱԻՆԼԻ ՔԱՆ կատարեալ: Երկրորդ մասը՝ որ Ամերիկայէն սկսող գողութեան բոլոր գաղտնիքները լայն կերպով պիտի բանար մեր առջևը, որ՝ պիտի կրնար շատ մը քողարկութեամբ մեղաւորութիւնները մերկացնել հանրութեան առջև, և որ աւելին է, սա մեզ չըրջապատող հազարաւոր մերկերու և անօթիներու խլուած իրաւունքին և բռնաբարութեամբ պատուոյն ի պաշտպանութիւն պիտի ըլլար, թողութեամբ է այնքան անտարբեր, այնքան անուշադիր և այնքան անորոշ ու մութ: Ո՛վ որ կարդաց այդ վճռագիրը մինչև իր վերջին բառը, կրցա՞ն հասկնալ թէ, քանի՞ հոս լաթեր եւ կօշիկներ ուղկուած է Ամերիկայէն, քանի՞ հոսք գողցուած է հոս, որքա՞ն կարծէ գողութեան իրական արժէքը, որքա՞ն պատրաստ լաթեր կան այժմ, եւ ո՞ր կը մնան անոնք այսօր: Այս բոլորը իր տեղեկագրին մէջ որոշապէս արձանագրելը իրաւարար ատեանի կատարեալ իրաւ տութեան մէջ պիտի ըլլար, քանի որ իր տեղեկագրի նախաբանին մէջ որոշապէս կըսէ. —

— «Ճշգրիտ համար Ա. — Պ. Եղիաեանի վերագրուած ամբաստանութիւնը,

նր, եւ Բ — Գործուած զեղծումին հետեւանով յառաջ եկած Հ. Կ. Խ ի վնասներ եւ անոնց նիւթական արժէքը: Եւ յանուն ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ և ԿԱՐՕՏԵԼՈՅ ԻՐԱՒՈՒՆՔԻՆ, մեր կողմէ կատարուած բազմակողմանի, մանրակրկիտ և օրինական քննութեանց և խորհրդակցութեանց որպէս արդիւնք, իրաւարար ատեանս ցաւով կը յայտարարէ, որ հասած է այս վճիռն, որ Պէյրութի Հ. Կ. Խաչի հագուստներու գործառնութեանց ընթացքին Պ. Ա. Եղիաեանի վերագրուած զեղծումը ճիշտ է, և կը հաստատուի օրինաւորապէս, յիշեալ Պ. Ա. Եղիաեանի վրայ:» (Ընդգծումները մերն են: Ա.)

Հոս իրաւ է որ Պ. Եղիաեանի վերագրուած զեղծումը բազմակողմանի և մանրակրկիտ փաստերով ցուցադրուած է. բայց ո՞ւր են գործուած զեղծումին հետեւանքով յառաջ եկած Հ. Կ. Խ ի վնասները և անոնց նիւթական արժէքը ցուցադրող բազմակողմանի մանրակրկիտ և օրինական քննութեանց ճշգրիտ արդիւնքը: Ահա, թէ ինչ կըսէ այս մասին ծանօթ տեղեկագիրը:

Յդ. Է. — Նկատելով որ շատ մը հալեր խեղաթիւում եւ այլափոխում են եւ վկաներու վկայութեամբ կը վաւերանայ, որ հսկայ եւ իրենց տեղէն չարժող հալերը քիւրութեամբ իրենց տեղերէն շարժել կարելի ըլլալու չափ փոքրացած են, իրաւաբար տեսանալու կուգայ այն համոզումին, որ Պ. Ա. Եղիաեան իրացուցած է նաեւ միւս հալերու մէջէն, սակայն պարունակութիւնը անորոշ ըլլալուն պատճառաւ այս պարագան մութ կը մընայ:

Հակերուն և սնտուկներուն բռնաւորման յատուկ Ամերիկայէն եկած պաշտօնաթուղթերուն մէջ միմիայն հագուստներու հակերուն թիւին դիմացը գրուած է 10606 լիպրա, իսկ ատոր տակ թէն առաջին տողի վրայ — 9 — սնտուկ կօշիկ գրուած է, բայց անոր դիմացը կշիռ գրուած չըլլալուն (երկուքին համար ալ ստոյգ հաշիւ գոյութիւն ունենալու համար) Ամերիկայի հետ այս գործը ընող վաճառականներէն հաստատեցինք, որ Ամերիկայի մէջ նաւային ընկերութիւնները feet ի հաշուով ապրանք կընդունին: Հետեւաբար ատեանիս կողմէ վերը յիշուած համոզումը թէն աւելի կը զօրանայ, բայց միւս խնդիրներու մէջ ձեռք ձգուած գորաւոր փաստաթուղթերուն նման փաստաթուղ-

թեր այս մասին կը պակսին և այդ իսկ պատճառաւ իրաւարար ատեանս հեռու կը մնայ վճիռ տալէ»:

Ուրեմն իրաւարար ատեանը հոս մեղմէ առաջ կընդունի և կը յայտարարէ որ.

Ա.— Պ. Ա. Եղիաեանի ծախած 416 հատ խաքի ճաքէթնէրէն և 70-80 հատ Պ. Շահպաղեանի տարած լաւադոյն կտորնէրէն զատ, «հսկայ և իրենց տեղերէն դժուարաւ շարժող» հակերու մէջէն «դիւրութեամբ իրենց տեղերէն շարժելու» աստիճան «լեւրացուցած է նաև միւս հակերու մէջէն»:

Բ.— Որ հակերուն և սնտուկներուն բեռնաւորմուն յատուկ Ամերիկայէն եկած պաշտօնաթուղթերուն մէջ որոշ չէ համագումար, թէ զատ զատ կշիռները: Միայն շատ անորոշ և անհասկընալի ձևի մը տակ 10606 լիպրա գրուած է. «մինչդեռ նաւային ընկերութիւնները Feetի հաշուով ապրանք կընդունին»:

Հոս դարձեալ մեղապարտի ցուցանակը կ'երկարի դէպի Ամերիկա: Հոս դարձեալ շատ վար յոռնիւ մը իրաւարար ատեանին, որը Պիղատոսական անտարբերութեամբ կըսէ.

— «Հետեւաբար ասեանիս կողմէ վեր յիշուած համադումը քեւ աւելի կը զօրանայ, բայց միւս խնդիրներէնու մէջ ձեռնդուած զօրաւոր փաստաթղթերուն նման փաստաթղթեր այս մասին կը պակսին. եւ այդ իսկ պատճառաւ իրաւարար ատեանս հեռու կը մնայ վճիռ տալէ:

Որքա՞ն անտարբերութիւն, սա գողութիւններու իրական արժէքը երևան հանելու խնդրոյն մէջ լուի:

Ո՛չ պարոններ, փաստաթուղթերը չէին պակսիր Ձեզ, եթէ նախապէս մութ ձեռքեր, բարի տրամադրութիւնները այնքա՞ն անզգալաբար կորդած չըլլային Ձեր մէջէն:

Ձեզմուած հակերուն և սնտուկներուն իրական կշիռը գրտնել և հաստատելը դժուար չի պիտի ըլլար ապրանքները բեռնաւորող նաւային ընկերութեան մանիթեքէն ճշգրէ, կամ ուղղակի Ամերիկայի կեդրոնէն հարցունել, անհրաժեշտ բոլոր մանրամասնութիւններու համար: Աճապարուած վճռագիր մը, չապիկ մը աւելի չի պիտի տար աղէտեալ հայուն. մինչ գողցուած

խոշոր պատուո մը պակսելու կը թողու եղիաեանի քանկէն մէջ:

Ո՞ր է հապա յանուն «արդարութեան և կարօտեցող իրաւունքին» Ձեր կողմէ կատարուած բազմակողմանի և մանրակրկիտ քննութեանց և աշխատանքի խոստացեալ արդիւնքը: Ինչո՞ւ չե՞նք Նեֆ-Ուի կ'ՄՆԱՔ վճիռ տալէ Ամերիկայի Կ. Սաչին դէմ, որը ո՛վ դիտէ որպիսի սև միտքերով և զեղծարար ձեռքերով բոլորէն առաջ փոքրութիւն և խառնակ վիճակ ստեղծած է խեղճ հակերու գլխուն, և առաւելապէս առիթ և դիւրութիւն ստեղծած է Եղիաեանի զեղծարարութեան:

Ձեր իրաւասութեան սահմանէն դուրս կը գտնէիք այդ բանը: Լաւ, մենք անհուն շնորհակալ և երախտապարտ իսկ պիտի ըլլայինք Ձեզ, եթէ իրապէս Ձեր իրաւասութեան սահմանէն բնաւ դուրս չի գայիք դոնէ նոյն տողերու նոյն սիւնակին տակ, և չ'ստորագրէիք Ձեր ալ յանձնապարտի դատավճիռը, հետեւեալ առդերու կողքին.

Յօդ. Ը — Ինչպէս որ եղած մանրակրկիտ եւ օրինական բնութիւններէն կը հաստատուի, Պէյրուսի հայ կարմիր խաչի վարչութիւնը [բնագծումը իրենցն է] յիշեալ հազուսներու գործառնութեանց ընթացին Պ. Ա. Եղիաեանի կողմէ գործուած գեղծումներուն մէջ [դարձեալ մասնաւոր ընդգծումներ իրենցն է:] ո՛չ մէկ մասնակցութիւն չէ ունեցած:

Ուսկի՞ց ուր այս վճիռը, կատակ մըն է արդեօք: Իրենք իրենց մէջ, Ե. Ս. Ս. Ա. Ս. Ս. և Կ. Ս. Ս. Ս., առաջինը ամբաստանող երկրորդը դատախազ: Երկու մարդ Եղիաեանի կողմէ, երկու մարդ Կ. Սաչին: Իսկ երրորդ մըն ալ անոնցմէ ծնած, եկած են «Նոր Փիւնիկ»ի խմբագրատան մէջ Կ. Սաչի, ամբաստանութիւնները, իսկ Եղիաեանի պաշտպանողականը լսելու ընդմիջու: Բաւական է վերջապէս քերի կամ աղմակ կը վճռեն Եղիաեանի մեղապարտութիւնն ու նիւթական պարտքը հատուցանելի Կ. Սաչի վարչութեան:

Հոս չե՞ որ վերջացաւ: Վերջացաւ, ինչ որ իրենց մէջ վիճելի էր, և ինչ որ կրնար իրենց իրաւասութիւնը եղած ըլլալ: Բայց ի՞նչ հառկալ երբ Եղիաեանի մը ձայնը միայն իրենց հետ ունեցող մարդիկ մէկ կողմէն, իսկ Կ. Սաչի հոգեցեալները միւս կողմէն իրար կուգան, իրենց լուսն գործը մէկ կողմ կը ձգեն և

5863-56



դաշնակցութեան գլխակին մէջ կը վճռեն. — «Պէտքութի կարմիր խաչի վարչութիւնը յիշեալ հագուստներու գործառնութեանց ընթացքին Պ. Ա. Եղիաեանի կողմէ գործուած զեղծումներուն մէջ ո՛չ մէկ մասնակցութիւն չէ ունեցած»:

Բայց ձեզ ո՞վ հարցուց այդ բանը: Յանուն որո՞ւ կը յայտարարէք այդպիսի վճիռ մը: Յանուն Եղիաեանի՞ն թէ այդ բանին սպասող է. խաչին անունովը ստիպուած էիք ըսելու նման բան մը: Ո՞վ էր դատախազը ընդդէմ է. խաչի ձեռք ատեանին առջև. ի՞նչ ամբաստանութիւններ և պաշտպանողականներ լսեցիք է. խաչի մեղապարտութեան չուրջ: Ի՞նչ տուեալներով եզրակացուցիք այդպիսի բան մը: Ո՞վ ձեզ կուտար այդ մեծ իրաւունքը, Եղիաեան թէ... է. խաչը: Իսկ եթէ կողոպտուած աղէտեալներուն անկող դատախազը ըլլալու յաւակնութիւնը ունեցաք. ինչպէ՞ս վստահիլ Ձեզ, երբ տակաւին քանի մը տող վերը կը ծուլանայիք փաստաթուղթեր դրոշմելու անոնց խլուած ու թալանուած շապիկները դուրս հանելու համար, և Պիղատոսական անտարբերութեամբ մը հետու կը մնայիք վնիւ սալի, թողլով որ ձեր իսկ ձեռքերովը սեւցուած Եղիաեանին պախճիւ մնար իր գողօնին աւելի քան կէսը: Եւ որո՞ւ քսակէն...:

Բայց կարծես ուշաբերուած, «Պէտքութի Հայ է. խաչի վարչութիւնը» «Պ. Արմէն Եղիաեանի կողմէ գործուած զեղծումներուն մէջ» ասացուածքները միշտ ընդդէմով — մասնակցութիւն չէ ունեցած — ըսող իրաւարար ատեանը անոր ճիշտ շարունակութեանը կաւելցնէ:

Յօդ. Ը. Բայց որպէս պատշաճ կան մարմին, պարտաւոր էր աւելի զգուշաւոր ըլլալ, որուն բնական հետեւանքով (զեղծարար համարձակութիւն չի պիտի ունենար իր այս զեղծումը գործելու:

Ահա թէ ինչպէս չեն մոռնար անմարսելի պատառին մարտողականն ալ ետեւէն տալու:

Բայց ի՞նչ արժէք ունին ձեր այս վերջին անկենդան տողերը, երբ «մանրակրկիտ, բազմակողմանի» քննութեանց բոլոր տեսողութեանը սև քօղի մը տակ ի պահ դրուած են անոնք, և այժմ բացարձակապէս անմարսելի պատառի մը վրայ որպէս

մարսողական կը հրամցուին մեզ:

Այո, շատ լաւ տեսած էք այդ բանը, շատ մեծ բարեմիտ մը պիտի արժէք ձեզ այդ բանը, եթէ անոր կեղտոտ ծալքերուն մէջ Թաղնուած գաղտնիքներն ալ մեզ վերլուծելու, բացատրելու, ըսելու քաջութիւնը ունենայիք: Եթէ՝ Ձեր մտքի այդ բարեբար լոյսէն չող մը ձգէիք Պէտքութէն մինչև Ամերիկա դաշնակցական է. խաչերու մէջ տիրող այդ Մոխր զանգառութիւններու, որով և անոնց բնական հետեւանք՝ զեղծարարներու համարձակութեան վրայ, ու մեզ աւելորդ անգամ մըն ալ բացատրէիք թէ, պատառ մը հացի չուրջ պար բռնող, կտոր մը հին լաթի վրայ զիրար բզկտող. գիշեր ու ցերեկ ազգասիրութիւն, բարեսիրութիւն ծախող և այլոց անտարբերութիւնը, ծուլութիւնը, զանցառութիւնը ամենաաղտոտ բառերով խառնող այս մերայիններուն քով. ինչո՞ւ է այս անգգուշութիւնը, ծուլութիւնը, զանցառութիւնը, իրենց իսկ արիւն քրտինք վաղվըղութիւններովը հանգանակուած սա մեր քանի մը կտոր հին լաթերուն չուրջ:

Ի՞նչ կարժէ խոշոր և անարդար պաշտպանողականի մը տակ Ձեր այդ քնքուշ ու փաղաքուշ ակնարկութիւնը, եթէ ան չի պիտի զօրէր որ բոլոր մեղսակիցները կողք կողքի հրապարակ գային, որ որքին ու անկարին գողցուած հին շապիկները մէկիկ մէկիկ մէջ տեղ բերուէին: Մեզ համար շատ աւելի կարժէր աղէտեալին մէկ հատ հին նախքը, քան թէ Եղիաեանի կամ է. խաչի հասցէին տրուած ձեր չոր դատավճիռները:

Դուք շատ լաւ ըրիք, երբ ստորագրեցիք զեղծարար Եղիաեանի մահուան դատավճիռը. բայց ինչո՞ւ անոր պախճիւ թողուցիք որբերու հացէն ու շապիկէն շատ խոշոր բաժին մը: Ինչո՞ւ գոնէ չառաջիւն ապտակ մը չի տուիք անոր մեղսակիցներու յանձապարտ երեսին: Ինչո՞ւ նախ քան բոլորը գրեցիք ձեր դատավճիռը:

Եւ այդ աւելորդ որ անպիտան Ը. րդ յօդուածին ճիշտ տակը ի՞նչ է սա ծիծաղաշարժ վերջաւանը:

— « Օրինաւորապէս եւ խղճմամբ կատարուած ու վերջացուցած բոլորով իրաւարար աշխատանքները քննարկելու ու դատաւարութիւնը եւ աշխատանքները քննարկելու իր արժեքները, միաձայնութեամբ կը վճռէ, քէ ոչ վերադարձնելով Պ. արժէն եղիական օրէնքներէն ելած վստահութիւնը չարաչար գոծածով պատժաւանաւու եւ օրէնք գեղծարար՝ զեղծութիւն վերադարձնելու գումարը հասուցանելու նախաւոր է Պետութիւնը հայ կաթոլիկ խաչի վարչութեան — Յօդ. Է. եւ զայս հաստատելով կ'ստորագրենք սոյն վճռագիրը »:

Ինչո՞ւ կ'աճապարէք «օրինաւոր եւ խղճմամբ» որակելու ձեր գործը ձեր լեզուով: Թողէ՛ք որ ուրիշները գովեստը քննեն ձեր գործին: Ամէն մարդ իր հաշուոյն օրինաւոր եւ խղճմամբ կը գործէ: Պ. Եղիականն ալ իր հաշուոյն «օրինաւոր եւ խղճմամբ» գտնուած է իր ստանձնած գործին հանդէպ:

Այո՛, շատ օրինաւոր եւ խղճմամբ կրնանք նկատել ձեր տեղեկագիրը, համակ խեղճ ու կարեկցութիւն գտնելով հոն հանդէպ եղիականի քսակին եւ Կ. Խաչի մերկայացած պատուոյն, մեղմեկ ճապիկի փոխ տալով անոնց, հայ աղետեալի մերկ կոնակէն.

* *

Հոս կը վերջանայ ծանօթ տեղեկագիրն ամբողջական մասը:

Անհամբեր սպասումի մղձաւանջին ետեւեւ «Նոր Փիւնիկ» անմիջապէս կը խլէ, կը շոյէ, կը սանձէ զայն, եւ կը տեղաւորէ իր թիւ 102ի մէջ, ամբողջ վեց տիւնակներու վրայ: Նոյն պէս այդ առթիւ, նոյն թիւին մէջ, փոփոխուել չթիւնելով խմբագրական մըն ալ կը նուիրէ Կ. Խաչի եւ «Իրաւարար տեսանք» գովքին, ու հարիւրաւոր քիւեր դրամով կը ծախէ Կ. Խաչի վարչութեան... ԶՐԻ բաժնեւոր համար քէմփերու եւ որդերու մէջ: (300 թիւին համար վճարուած է 900 դրշ. սրկն.)

Ո՛վ երկիրք, ինչո՞ւ այսքան բարոյական անկեղծ վիճակիցիւր գուն մեր շուրջը, մերայիններուն, որոնք համահաւատար ՀԱՅ կը կոչուին, Մեքորպեան տառերու Ս. անունով լեզուաւորուող կըլլան եւ սակայն գիր ու գրիչ աճուրդի կը հանեն, մասնաւոր կը ծախեն:

Ինչո՞ւ մարդկային բարեգործութիւնը, մարդասիրութիւնը, ազգասիրութիւնը, հազար ու մէկ սրբանուն միութիւններու պատուանդանին տակ ամէն օր կը խողովողուին, կը խաչ լին,

կը պղծուին... հանապազօրեայ չոր հացի մը գնով: Ինչո՞ւ քու խաչիդ լուսատու թեւերուն տակ կ'որջանան այսքան մութ ստուերներ, որոնք մէկ կողմէն կը գողնան որբին արեւնոտ շապիկը, կը խլեն անկարին լեղի հացը, եւ միւս կողմէն լիաբուռն կը բաշխեն իրենց գովքը չեփորող վարձկաններուն:

Եւ... ԶՐԻ թերթ կը բաժնեն քէմփերու եւ որբերու մէջ:

Աղէտեալ հայուն չոր հացէն հազարապատիկը անգամ աւելի գին վճարուած այդ վարձկան թերթերը ինչո՞ւ ԶՐԻ բաժնեւոր քէմփերու մէջ: Դեռ ի՞նչ է ուզուածը սա կմախքացած իրաններէն, որոնք բոլորը անմեղ գոհերն են դեռ երէկի տխուր անցեալին:

Օ՛, կուզէ՛ք որ անոնք ալ անձնատուր ձեր խուլ աղմուկին, անմեղ ու անպա՛րտ յայտարարեն թաւանը սա կողոպտիչներուն, կամ սեղմեն ձեռքերը իր դաւադիրներուն:

Եւ այդ չէ՞ միթէ ամբողջ սեւ միտքը փարիսեցիական ողորմածութեան, կաշառքի եւ մոլորութեան թոյնով շաղուած:

Բայց, ինչո՞ւ է իրաւարար չէզոք տեսանի մը վճռագիրը այնքան լայնանիստ, ԼՈՎ դաշնակցական «Նոր Փիւնիկ»ի մէջ: Ինչո՞ւ են այնքան կոյր ու միակողմանի գովքը «չէզոք?» Կ. Խաչին, ԼՈՎ դաշնակցական «Նոր Փիւնիկ»ի — ԽՄԲԱԳԻԱԿԱՆ-ին տակ: Ինչո՞ւ եւ որու քսակէն է սա 900 դրշ. վճարումը 300 օրինակ «Նոր Փիւնիկ»ի հաշուոյն ԶՐԻ թերթ բաժնեւոր կախարդական մտքին համար:

Ո՞ր բարեգործ մտքի նուիրատուութեան դիմաց որպէս ելք պիտի արձանագրուի այդ դրամը, կամ նման շատ մը պատկանելի գումարներ:

Եւ դարձեալ այսքան սեւ վարագոյրի մը ետին, Կ. Խաչի վարչութիւնը իր հին լաթերու բաշխումը կը ծրագրէ հայրենակցական միութիւններու ձեռքով, չողոքորթ ժպիտներով եւ քծնի շարժումներով կացքի կը կենայ անոնց առաջ, մինչեւ որ ընդարմացնէ այդ բազկերակները, իր նորանոր ներարկումներուն համար:

Զեղծուած նպաստին այս ձև բաշխումը միթէ Կ. Խաչին
կողմէ ԻՆՔԼԱՍԱՆՎՍՏԱՀՈՒԹԻՒՆ մը չէ՞, ամ կաշառքի ու մոլո-
րութեան նորեկուկ թոյն մը, ծրարուած հին լաթերու և ՁՐԻ
թերթերու մէջ:

Իսկ զեղծարար Արմէն Եղիաեանի շուրջ բարձրացող զօրա-
ւոր աղմուկը, շատապարտութեան խիստ լեզուէն, և անխնայ
սպառնալիքները նորահնար ձեւեր մը չե՞ն, հանրային ամէն ու-
շադրութիւն զօրաւոր կերպով հոն կեդրոնացնելու, հոն լարե-
լու, մինչեւ որ իրենց սև դիմակները պահեն քաջուած վարա-
դոյրին ետին:

Բայց ո՞ր պողպտեայ բաղուկը մի օր պիտի դայ խառանե-
լու և հաշիւ պահանջելու այս բոլորին համար, քանի դեռ ՄԵԾ
ՀԱՄՐԸ ԿԸ ԼԻԷ:

Ահա մենք արձանագրեցինք մեր ամբաստանութիւնները
սրտի դառն մորմոքով և շատ հակիրճ տողերու մէջ միայն: Կը
սպասենք ազգային իրաւարար դատաստանի մը, եթէ օրուան
իշխանաւորներն ալ չեն ուզեր մեղսակից մնալ յորբին ու ան-
կարին կողոպտուած շապկին, եթէ չեն ուզեր լռութեամբ սըր-
բագործել նման հանրային կեղտոտ զեղծարարութիւն մը:

ՎԵՐՋ



300

ԱՖ.

ԳԻՆ 1 ՖՐ.

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0047039

